

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վարդան Բոստանջյանի, Վահագն Մախսուդյանի, Նաիրա Զոհրաբյանի և Գոհարիկ Ենոքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է օրենքով սահմանել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրի իրականացման գծով նախատեսվող հատկացումների չափի նվազագույն շեմ (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասի 0.5 տոկոսի չափով): Համաձայն նախագծի ընդունման հիմնավորման՝ առաջարկությունը ներկայացված է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման առավել բարենպաստ պայմանների ստեղծմանն ուղղված պետական քաղաքականության համատեքստում, սակայն հիմնավորված չէ ո՛չ նշված քաղաքականության իրականացման տեսանկյունից նման շեմ սահմանելու անհրաժեշտությունը, ո՛չ էլ՝ այդ շեմի չափը:

Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծում ցանկացած ծրագրի գծով հատկացումների նախատեսման

հարցի քննարկման ժամանակ հաշվի է առնվում, թե որքանով է նշված ծրագիրը բխում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունից, արդյոք, այն այդ քաղաքականության գերակայություններից է, որոնք են այդ ծրագրի իրականացման իրավական հիմքերը, որքանով է հիմնավորված և հաշվարկված այն, ինչպիսին են այդ ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները և այլն: Դրա հետ մեկտեղ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակման ժամանակ շատ էական են նախագծում բյուջետային ելքերի կառուցվածքի և ծավալների ձևավորման վրա անմիջականորեն ազդող՝ տվյալ տարվա համար կանխատեսվող մակրոտնտեսական և բյուջետային շրջանակների նվազագույններով պայմանավորված սահմանափակումները: Հայաստանի Հանրապետության կառավարության համոզմամբ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացում՝ նշված մոտեցումների դրսևորմամբ, այլ ոչ թե առանձին ոլորտների գծով տարբեր օրենքներով բյուջետային ծախսերի նվազագույն շեմերի սահմանմամբ և դրանով իսկ տվյալ տարվա բյուջետային ծախսերի կառուցվածքի կանխորոշմամբ է հնարավոր ապահովել Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեի ծախսային մասի կառուցվածքի արդյունավետությունը՝ երկրում առկա հիմնախնդիրների լուծման նպատակաուղղվածության տեսանկյունից:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վարդան Արամյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Լրամշակված
Պ-851-19.03.2010-SՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«Փոքր եւ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին»
2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-121 Հայաստանի Հանրապետության օրենքի 4-
րդ հոդվածի 1-ին մասի երրորդ նախադասությունը լրացնել «, որի չափը չի կարող
պակաս լինել տվյալ տարվա պետական բյուջեի ծախսային մասի 0,5 տոկոսից:»
բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող տասներորդ օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է

երկրի սոցիալ-տնտեսական եւ տարածաշրջանային կայուն զարգացման
ասպարեզում պետական շարունակական աջակցությամբ ՓՄՁ-ի դերի
բարձրացմանը նպաստելուն: Կարեւորելով երկրի տնտեսության զարգացման, նոր
աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման,
հասարակության միջին խավի ձեւավորման, երկրում սոցիալական եւ քաղաքական
կայունության ապահովման գործում ՓԲՁ-ի դերը` Հայաստանի
Հանրապետության կառավարության շարունակական քայլեր պետք է ձեռնարկի
ՓԲՁ-ին պետական աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ, քանի որ ՓԲՁ-ները
նշանակալի դեր են խաղում նաեւ երկրի համախառն ներքին արդյունքի եւ
հարկաբյուջետային ցուցանիշների ձեւավորման գործում: Պատահական չէ, որ 2009
թվականի տվյալներով ՓԲՁ-ի կողմից հարկերի, տուրքերի եւ պարտադիր այլ
վճարների տեսքով պետական բյուջե է վճարվել շուրջ 150 մլրդ դրամ կամ վճարված
հարկերի 20 տոկոսը: ՓԲՁ-ները նշանակալի դեր ունեն նաեւ արտահանման 17
տոկոս եւ ներմուծման 35 տոկոս` ցուցանիշներով: Ներկայումս ՓԲՁ-ի
զարգացումը տեղափոխվել է նոր փուլ` ձեւավորվում եւ ամրապնդվում է
պետական աջակցության համակարգը, ընդլայնվում է ՓԲՁ-ին ցուցաբերվող
ֆինանսական աջակցության ծավալներն ու աշխարհագրությունը: Այս
համատեքստում պետական քաղաքականությունն ուղղված է ՓԲՁ-ի զարգացման
համար ավելի բարենպաստ պայմանների ստեղծմանը, ազատ մրցակցության
խթանմանը, վարչարարական ընթացակարգերի պարզեցմանն ու
թափանցիկության ապահովմանը, որի համար օրենքով սահմանված կարգով
ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրերի ֆինանսավորումը
կատարվում է պետական բյուջեից` առանձին տողով: ԵՎ նկատի ունենալով, որ
«Փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում ամրագրված չէ պետական բյուջեից
պետական ծրագրի իրականացման ֆինանսավորման չափը, հանդես եմ եկել
օրենսդրական նախաձեռնությամբ եւ առաջարկում եմ նշված օրենքի 4-րդ հոդվածի

1-ին մասի երրորդ նախադասությունը լրացնել «որի չափը չի կարող պակաս լինել տվյալ տարվա պետական բյուջեի ծախսային մասի 0,5 տոկոսից: Ե բառերով: